ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ—ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՂ ԽՄԲԱԿ

ИНСТИТУТА
СССР

# ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՆՈՆՆԵՐ

## ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԵՎ ՄՏԿ-Ի ՊԱՀԵՍՏՆԵՐՈՒՄ ՑԵՎ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՑԱՀԱՏԻԿ ՊԱՀԵԼՈՒ ՑԵՎ ՏԵՂԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝ ՀԺԿ. ՏԵՂԱԿԱԼ ՄՈՒՐԱԼՈՎ)

633.1
Պ-36

ԳՅՈՒՂՀՐԱՏ 1934 ՅԵՐԵՎԱՆ

30 SEP 2013
6357
Դ-36

Ք 811
35-Ա

24 SEP 2010

Հաստատում եմ՝ ՀԺԿ-ի
տեղակալ ՄՈՒՐԱԼՈՎ.

# ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՆՈՆՆԵՐ

## ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՄՏԿ-ՆԵՐԻ ՊԱՀԵՍՏՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՑԱՀԱՏԻԿ ՊԱՀԵԼՈՒ ՅԵՎ ՏԵՂԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԽՍՀՄ ՀԺԿ-ի ս. թ. սեպտեմբերի 26-ի վորոշման հիման վրա առաջարկվում ե բոլոր տեսակի հացահատիկների պահպանման համար գործադրել հետևյալ սանիտարական-պրոֆիլակտիկ միջոցառումները, վորոնք պարտադիր են բոլոր ՄՏԿ-ների, խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների համար, վորով հնարավոր ե կանխել հացահատիկների վարակումը հատիկային տիզից* (зернов. клещ) *և այլ շտեմարանային վնասատուներից։*

## 1. ՄԻՆՉ ՏԵՂԱՎՈՐԵԼԸ

*1. Տեղավորվելիք հացահատիկը պահելու համար անհրաժեշտ ե պարտադիր կերպով*

ԾԵՐ

18763

քամհար տեսակավորող մեքենաների միջով անցկացնել այն՝ մոլախոտերից և մանր փոշուց մաքրելու նպատակով, վորոնց ներկայությունը նպաստում է հատիկային տիզի զարգացմանը։

2. Հացահատիկի քամհարումը և տեղավորումը պետք է կատարվի շտեմարանից 100 մետրից վոչ պակաս հեռավորության վրա։ Այդ աշխատանքը կատարել այն հաշվով, վոր քամհարված փոշին չանցնի պահեստը։

3. Յեթե հացահատիկը վարակված է հատիկային տիզով, այդ դեպքում անպայման պետք է կատարել չորացում՝ կրակի միջոցով (огневая сушка), համապատասխան մեքենաներ ունենալու դեպքում (համաձայն Միութենական ՀԺԿ-ի պարտադիր կանոնների), իսկ արևոտ օրերին չորացնել արևի տակ, քամհարել և սառեցնել։

4. Մաքրելուց հետո, տնտեսական արժեք չներկայացնող բոլոր մնացորդները պետք է վոչնչացնել։ Մնացորդներն օգտագործել թույլատրվում է նախորոք յեռացրած ջրում յեփելու պայմանով։ Մնացորդները պահել առանձին—շտեմարանից հեռու տեղում։



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм. ССР
59689-66

5. Հատիկային տիզով և ուրիշ վնասատուներով (շտեմարանային յերկարակնճիթ կամ ցորենի վոջիլ և այլն) վարակված հատիկը, յեթե հնարավոր չէ ախտահանել այլ միջոցներով,—պետք է ախտահանել քիմիական նյութերով, այն է՝ սերմացու հատիկը ծծմբածխածնով, ապրանքային հատիկը՝ քլոր-պիկրինով և այլ քիմիական նյութերով (համաձայն Միութենական ՀԺԿ-ի հրահանգի)։

## 2. ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐՈՒՄ

1. Հացահատիկների պահպանման համար տրամադրվելիք և տրամադրված շենքերը, մինչ հացահատիկ տեղավորելը, խնամքով պետք է մաքրել հատակի, պատերի, առաստաղի, յենթահատակի և չարդախի տակ յեղած անցքերի աղբից և փոշուց։ Ամբողջ աղբն այրել։ Անհրաժեշտ է շենքերը տարեկան յերկու անգամ ախտահանել (գարնանը՝ շենքն ազատելուց հետո, իսկ աշնանը՝ մինչ նոր բերքը տեղավորելը), այսինքն սպիտակացնել կամ սրսկել կրի և նավթի խառնուրդով։ Յեթե շենքերը վարակված են վնա-

սառուններով, անհրաժեշտ է կատարել գագային ախտահանում (քլորպիկրինով), իսկ յեթե այդ հնարավոր չէ (շենքի ամուր չլինելու պատճառով), կատարել թաց ախտահանում՝ կաուստիկ սոդայով։ Յենթահատակն ախտահանել պարտադիր է։

2. Հատիկի մեջ և շենքերում (շտեմարաններում) վնասատուների առաջացումը հետեվանք է Ցելսիուսի 8—10 ջերմաստիճանից ավելի պահելուն և 12—13 $^{0}/_{0}$-ից բարձր խոնավությունը, ուստի պահպանման ժամանակ շտեմարանում և հատիկի մեջ պետք է պահպանել համապատասխան ջերմաստիճան և խոնավություն, դրա համար առաջարկվում է՝

ա) Պարբերաբար օդափոխել շենքերը չոր յեղանակներին, բացելով դռներն ու պատուհանները։

բ) Հատկապես պատրաստված փայտյա խողովակների միջոցով շտեմարանները մշտապես օդափոխել։

գ) Սերմացու հատիկը պետք է առանձին պահել մյուս հացահատիկից։ Ամբողջ հատիկը պահել փոքր կույտերով ( 2 մետրից ոչ ավել)



կամ տարայի մեջ, որով հեշտանում է նրա օդափոխությունը և հետագա վերամշակումը։

3. Արգելվում է միևնույն շենքում հացահատիկի հետ միասին պահել հատիկի մնացորդները, ալյուրը, կրուպան և մշակման յենթակա մյուս պարենն ու չախտահանված գույքը։

4. Շտեմարանների հատակը, պատերը և ընդհանրապես ամբողջ շտեմարանը, ամեն մի պարտյա հացահատիկը շտեմարանից դուրս տանելուց հետո, ավելով մաքրել։

5. Պարբերաբար ամսական յերեք անգամից ոչ պակաս, իսկ գարնանը՝ ամսական 4—5 անգամ պահեստում ստուգել հատիկի ջերմաստիճանը և նորմայից ավելի բարձր ջերմաստիճան հայտաբերելու դեպքում, հատիկն անհրաժեշտ է խառնել և շուռ տալ փայտյա թիյերով կամ քամհարել։

6. Շտեմարանի տանիքը և պատերն անցքեր չպետք է ունենան, որպեսզի հատիկի մեջ անձրևաջուր և ավելորդ խոնավություն չթափանցի։

7. Շտեմարանի կողքին արգելվում է պահել հարդ, աղբ, գոմաղբ և այլն։ Պարբերաբար

մաքրել պատերի մոտ կուտակված աղբը և ձյունը։ Եթե շտեմարանն ունի լենթահատակ, նույնպես պարբերաբար պետք է մաքրել։

8. Հացահատիկն շտեմարանում պահել թույլատրվում է միմիայն հատիկային տիզից և այլ վնասատուներից զերծ լինելու դեպքում։ Հատիկը մինչ ախտահանելը պահել առանձին շենքում։

## ՏԱՐԱ ՅԵՎ ԳՈՒՅՔ

1. Պարտադիր է մաքրել ամբողջ տարան, հատիկ մաքրող և հնձող մեքենաները, կալերից դեպի շտեմարանները, դեպի մթերման կայաններն օգտագործվող փոխադրական միջոցները և այլն։ Եթե փոխադրվել է վարակված հացահատիկ,— տարան ախտահանել քլորպիկրինով, իսկ գույքը և փոխադրական միջոցները՝ յեռացրած ջրով։ Տարան, գույքը և փոխադրական միջոցներն ախտահանել և մաքրել ամեն մի պարտյա փոխադրելուց հետո։

2. Արգելվում է մինչ ստուգումն այլ տնտեսություններից ստացված տարան ու



գույքը ներմուծել շտեմարան։ Թույլատրըվում է վերոհիշյալ գույքն ու տարան զետեղել շտեմարան միմիայն ախտահանումից հետո։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

Սրբագրիչ՝ Խ. Այվազյան
Թույլատրված է գլավլիտ № 307
Հանձնված է արտադրության 1934 թ. նոյեմբերի 3-ին
Ստորագրված է տպագրվելու 1934 թ. նոյեմբերի 6-ին
Հրատ. №149, պատվեր 659, տիրաժ 2000

ՅԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50.

ՀՀ Ազգային գրադարան
NL0286485

18763

ԳԻՆ

Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР

**Обязательные правила хранения зерна в амбарах и складах колхозов, МТС и совхозов НКЗ**

Сельхозгиз 1934 Эривань